(ԴՊՐՈՒԹ. Գ, ԳԼՈՒԽ Ե.)

1 [1]Վասն որդւոցն Վրթանայ, որոց անուանք այս են[2]. առաջնոյն Գրիգորիս, եւ երկրորդին[3] Յուսիկ:

2 Այս Վրթանէս[4] եւ Առիստակէս[5] որդիք էին մեծի քահանայապետին սրբոյն[6] Գրիգորի: *3* Եւ էր Առիստակէս կուսան եւ[7] սուրբ ի մանկութենէ. զի թէպէտ եւ կրսեր[8] որդի էր, կանխաւ եհաս յաթոռ հայրենի եպիսկոպոսութեան[9]: *4* Իսկ Վրթանէս էր ամուսնացեալ եւ անորդի, եւ[10] բազում ժամանակս խնդրէր նա յԱստուծոյ՝ զի մի՛ զրկեսցի նա[11] յաւրհնութենէ զաւակի, այլ ի պտղոյ նորա կացցէ առաջի նորա ի պաշտաւն Տեառն: *5* Եւ ի ծերութեան նորա լուաւ Տէր աղաւթից նորա, յղացաւ ամուսին նորա, եւ ծնաւ երկուս[12] որդիս երկուորեակս[13], եւ կոչեաց զանուն երիցուն յանուն հաւր իւրոյ Գրիգորիս, եւ երկրորդին՝ Յուսիկ, որք սնան զառաջեաւ թագաւորին Հայոց, եւ ուսման գրոց փոյթ ի վերայ կալան ուսուցանել զնոսա: *6* Ապա երէց որդին Գրիգորիս եհաս յեպիսկոպոսութիւն կողմանցն Աղուանից եւ Վրաց[14], վասն հոգեկիր առաքինի արգասեացն, բարեհասակ[15], եւ զգիտութիւն Աստուծոյ յանձին կրելով: *7* Ոչ ամուսնացաւ նա[16], այլ ի հնգետասանամենից եհաս յաշտիճան[17] եպիսկոպոսութեան աշխարհին[18] Վրաց եւ Աղուանից, այս ինքն սահմանացն Մազքթաց: *8* Երթեալ նորոգեաց անդ[19] զեկեղեցիսն լուսաւոր կարգաւքն առաջնոյն Գրիգորի, հաւրն գործոց[20] նմանեալ:

---

1 *Բ, Դ յաւելուն՝* Պատմութիւն. Գ, Պատմութիւն սրբոց հայրապետացն Հայոց՝ Առիստակիսի, Վրթանիսի, Յուսկանն եւ Գրիգորիսի

2 *Բ* անուանքն են այս. *Դ չունի* այս են

3 *Բ չունի՝* եւ. *գրէ՝* երկրորդն

4 *Բ, Գ* Առիստակէս եւ Վրթանէս

5 *Դ* Արիստագէս

6 *Բ, Գ, Դ չունին՝* սրբոյն

7 *Բ, Գ, Դ չունին՝* եւ

8 *Դ* կրտսէր

9 *Ա չունի՝* եպիսկոպոսութեան

10 *Գ չունի՝* եւ

11 *Դ չունի՝* նա

12 *Բ, Գ* երկու

13 *Դ* երկուորդեակս

14 *Դ չունի՝* եւ Վրաց

15 *Դ չունի՝* բարեհասակ

16 *Բ, Գ չունին՝* նա

17 *Բ, Գ* յաստիճան

18 *Դ չունի՝* աշխարհին

19 *Բ, Գ* անդ նորոգեաց. *Դ* երթեալ անդ լուսաւորեաց

20 *Դ փոխ.* հօրն գործոց՝ *գրէ* պապուն իւրոյ